# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 նոյեմբերի 2024 թվական

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-89/24» ծածկագրով գնման ընթացակարգը և ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար պաշտպանիչ արտահագուստի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-89/24» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ն և 2024 թվականի հուլիսի 15-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Իմփրուվ» ՍՊԸ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-89/24-01/263 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները (պայմանագիրը կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում), որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ին:

**Գլխավոր տնօրեն** **Է. Մարտիրոսյան**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ | 04436817 | ք.Վաղարշապատ 1101, Մռավյան փ. 40Ա | | Առկա է | | Որոշում առ 2024 թվականի նոյեմբերի 27-ի<br>Գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-89/24» |